Հետազոտական աշխատանք

Կազմակերպության տվյալներ • Անվանում, հասցե • Տնօրեն • Էլ.հասցե • Հեռախոս	«Մասնակցային դպրոց» կրթական հիմնադրամ Վահրամ Սողոմոնյան masnakcayindproc@gmail.com +37493581908
Հետազոտության թեմա/վերնագիր • Հետազոտության թեմա	Ընթերցանությունը և նրա դերը կրտսեր դպրոցականի կյանքում որպես հաղորդակցման միջոց
Ուսուցչի տվյալներ • Անուն, ազգանուն, հայրանուն • Մասնագիտություն • Հեռախոս • Էլ. հասցե • Դասավանդվող առարկաներ • Դասարաններ	Ռաիսա Համբարյան Ռոբերտի Դասվար 093.70.66.94 raisa.hambaryan84@mail.ru raisahambaryan@gmail.com մայրենի մաթեմատիկա տախնոլոգիա կերպարվեստ երաժշտություն
Ուսումնական հաստատության տվյալներ • Անվանումը, հասցե • Հեռախոս • Էլ. հասցե (տնօրենության) • Web կայքի հասցե	Վանաձորի Գայի անվան 21հիմնական դպրոց +322.4.81.77 vanadzor21@schools.am

Բովանդակություն

Ներածություն **3**
Հիմնական բովանդակություն **4**
Եզրակացություններ, առաջարկություններ **5**
Օգտագործված գրականության ցանկ **6**
Հավելվածներ **7**

:

Նպատակը եւ հետազոտական հարցը	Ձևավորել և զարգացնել երեխաների կարդալու կարողությունները,ձևավորել հաղորդակցական կարողություններ,բարեկիրթ խոսքի մշակույթ: Ի՞նչ ազդեցություն ունի ընթերցանությունը սովորողի բանավոր հաղորդակցման գործընթացում:
Ո՞ր առանցքային կոմպետենցիային/կարողունակությանն է ուղղված նպատակի ուսումնասիրությունը	Լեզվական Սովորել սովորելու
Հետազոտության թիրախային խումբը և շրջանակը /քանակ, սեռային բաշխում/	4 դասարան տղաներ-5 աղջիկներ-7
Օգտագործված հետազոտական մեթոդները, գործիքները (օրինակ՝ քանական հետազոտություն՝ հարցաթերթիկի միջոցով, որակական հետազոտություն՝ խորին հարցազրույցի միջոցով եւ այլն)	ԳՈՒՍ Կիսատ նախադասություն Լուսակիր

Հետազոտության իրականացման ժամանակահատվածը	5.09- 18.09

Հիմնական բովանդակություն

Գրականության ակնարկ • Մեջբերումներ արդեն արված հետազոտություններից, • Մեջբերումներ գրականությունից, տեղեկության վստահելի աղբյուրներից:	Ներածություն Մայրենի լեզվի ուսուցման կարևոր նպատակներից մեկը Միխայել Նալբանդյանը համարել է ընթերցանությունը՝ որպես օրինակելի և կանոնավոր խոսքի ընդօրինակման, գիտելիքի հայթաթման, բառապաշարի հարստացման ու մտահորիզոնի ընդլայնման միջոց:<<Կարդալը հարստացնում է մարդու միտքը, խոսելու մեջ վարժվելը հաղորդագյուտ է անում նրան, իսկ գրելը սովորեցնում է ճշտություն>>,-ասել է Միխայել Նալբանդյանը: Կարդալու ուսուցումը տարրական դասարաններում մայրենի լեզվի հիմնական նպատակն է: Աշակերտների լավ, արտահայտիչ կարդալու կարողությունները ու հմտությունները ձևավորվում են հայոց լեզվի ընթերցանության ուսուցման ամբողջ գործընթացում: Իհարկե այս ամենը հաջողվում է որոշ աստիճանականությամբ ու հաջորդականությամբ: Տարրական դասարաններում մշակվում են գիտակցական և արտահայտիչ կարդալու կարողություններ: Տառաճանաչ դարձած առաջին դասարանցու մոտ ուսուցիչը պետք է սեր առաջացնի ընթերցանության հանդեպ և անընդհատ զարգացնի ընթերցելու կարողությունները: Միշտ էլ մեր հիմնախնդիրներից եղել և մնում է սաներին սովորեցնել սիրել գիրքը,օգտվել նրանից և նոր գիտելիքներ քաղել նրանից: Ընթերցանության հիմնախնդիրներից մեկն էլ երեխաների մտավոր զարգացումն է ,նրանց նոր գիտելիքների ու տեղեկությունների հաղորդումը,որոնք ոչ միայն պետք է նպաստեն նրանց կրթական մակարդակի բարձրացմանը, այլև երեխաներին պետք է նախապատրաստեն ավելի բարձր դասարաններում ուսումնական տարբեր առարկաներից համակարգված դասընթացների ուսումնասիրությանն անցնելուն	

Հետազոտության ընթացքը	Այսօր ընթերցանությունը ընկալվում է ոչ թե որպես սովորելու առարկա , այլև մտածելու և սովորելու գործիք: Ըստ ընթերցանության մեթոդիկայի՝ լավ ընթերցել հացկացությունը ենթադրում է հետևյալ բաղադրիչները՝ Այս հատկանիշների պահպանմամբ ՝ ընթերցանությունը պետք է դառնա ակտիվ գործընթաց, որը կստիպի մտածել ընթերցվող նյութի շուրջ: Նյութի ընթերցման ժամանակ առանձնահատուկ հնչերանգով պետք է արտահայտվեն թե՛ հեղինակի, թե՛ տարբեր գործող անձանց խոսքերը: Գեղարվեստական նյութի ընթերցման ժամանակ խիստ կարևոր է ձայնի պարզությունը : Ընթերցելիս պահանջվում է նաև նստել ուղիղ, հանգիստ, իսկ արտասանելիս՝ անհրաժեշտ է ձայնը հնչեցնել ոչ թե դեպի ներքին կամ վերին, այլ կարդալուց առաջ օդը շնչել խորը, ծախսել մաս-մաս ու լրացնել այն միայն դադարների ժամանակ: Տարրական դասարաններում արտահայտիչ կարդալ սովորեցնելու գործընթացի հիմքում ընկած է հայերենի հիմնական կետադրական նշանների ըմբռնումը և կարդացած նյութի հասկացումը: Նյութի ընթերցման ժամանակ դադարները համապատասխանում են կետադրական նշաններին:

Հայտնի է, որ արձակ ստեղծագործությունը գրված է լինում ընդհանրապես առանց հանգի և կանոնավոր ռիթմի և համեմատաբար ավելի հեշտ է ընթերցվում, քան չափածոն: Սակայն դա դեռ չի նշանակում,թե նրա ընթերցումը ռիթմի պահպանման տեսակետից ոչ մի դժվարություն չի ներկայացնում : Որպեսզի ընթերցանությունը լինի գեղեցիկ արձակ ստեղծագործությունների ժամանակ, ապա այն ընթերցելիս ձայնին պետք է տալ համապատասխան բարձրություն, արագություն և շեշտադրություն: Ի տարբերություն արձակի չափածո երկն ունենում է կանոնավոր ռիթմ, որը ստեղծագործությանը տալիս է սահունություն, ներդաշնակություն ու երաժշտականություն: Գ. Էդիլյանը խոսելով գեղեցիկ ընթերցման մասին, գրում է .<<Գեղեցիկ կարդալ նշանակում է կարդալիս ձայնի պարզության , բարձրության, ուժեղության, արագության, շեշտերի , դադարների և այլ հանգամանքների վրա ուշադրություն դարձնելը>>:

Դասի ընթացքում աշակերտներին արտահայտիչ ընթերցման օրինակ պետք է ցույց տա ուսուցիչը, ուստի հենց ինքն էլ պետք է լինի առաջին ընթերցողը: Լինում են դեպքեր, երբ ուսուցիչը առաջին ընթերցումը հանձնարարում է դասարանում լավ կարդացող աշակերտի , իհարկե սա այն դեպքում , երբ ուսումնասիրվող նյութը ընթերցման տեսակետից լուրջ դժվարություն չի ներկայացնում, իսկ եթե նյութը պարունակում է դժվար հասկանալի բառեր ու հարտահայտություններ, ուսուցիչն այն ընթերցում է երկրորդ անգամ մեկնողաբար:

Արտահայտիչ կարդալը գեղեցկացնում է լեզուն, խոսքը դարձնում է պատկերավոր, նպաստում է նյութի ըմբռնմանը, բարձրացնում է աշակերտների գեղագիտական ճաշակը: Աշակերտների արտահայտիչ ու զգացմունքային ընթերցելու կարողությունը մեծապես կախված է այն բանից, թե նրանք որքան ճիշտ ու հստակ են հասկացել ստեղծագործության բովանդակությունը, գաղափարն ու ենթատեքստը, հստակ պատկերացում ունեն տեղի ունեցող դեպքերի, դրանց պատճառահետևանքային կապերի, ինչպես նաև հերոսների նկատմամբ հեղինակի ունեցած վերաբերմունքի մասին:

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ

Ինչպես Ուշինսկին է ասում, կարդալը դեռ ոչինչ չի նշանակում: Ի՞նչ և ինչպե՞ս կարդալ՝ սա է հարցի էությունը:
Ընթերցանության ժամանակ աշակերտները ձեռք են բերում բազմաբնույթ տեղեկություններ, սովորում են տարբեր բառեր ու արտահայտություններ, որոնք հարստացնում են երեխաների բառապաշարը, զարգացնում են միտքը, նրանց հնարավորություն են տալիս ստեղծագործելու, տրամաբանելու և մտքի հասնելու անհասանելիին:
Սովորողները կարդալու ժամանակ և հետո կարողանում են կատարել վերլուծություններ: Նրանք խորհում են իրենց ընթերցածի շուրջ, կատարում են վերլուծություններ: Ապրումակցում են հերոսներին , քննադատում, արդարացնում են նրանց , գնահատում են նրանց արարքները: Եթե սովորողը կարողանում ընթերցած նյութի հերոսների արարքները համեմատել իր կյանքի որևէ դրվագի հետ, նշանակում է նա կարդում է ըմբռնումով, այսինքն նա ընթերցած նյութը կարողանում է ճիշտ ընկալել: Զգում են կատարել իրենց ընկալած բարոյական նորմերին համապատասխան արարքներ, միաժամանակ խթանվում է աշակերտների ստեղծագործական միտքը: Որպեսզի ընթերցումը օգտակար լինի , այն որևէ ազդեցություն թողնի սովորողի վրա, արդյունքում ընթերցողի իմացական ոլորտում փոփոխություններ լինեն , պետք է ուսուցիչը կազմակերպի հետաքրքիր և մատչելի, հասանելի բոլորին ընթերցանություն,:
Պետք է ընտրել այնպիսի նյութ, որը ունենա հատուկ նպատակ, որի արդյունքում երեխաների մտահորիզոնը կընդլայնվի և նրանք կկարողանան կատարել վերլուծություններ՝ օգտագործելով և մեջբերելով ընթերցած նյութից հատվածներ, բառակապակցություններ, որոնք կունենան ուսուցողական , ճանաչողական նշանակություն:
Ինչի արդյունքում սովորողը հարստացնում է բառապաշարը, կարողանում է կատարել եզրահանգումներ և դասեր քաղել ընթերցված նյութից:
Ընթերցանության ժամանակ սովորողի մոտ սեր է արթնանում դեպի հայրենիքն ու ժողովուրդը, նրանց հաղորդակից դարձնում հայոց լեզվի ճոխությանը,

դեղեցկությանն ու ճկունությանը: Աշակերտների մոտահորիզոնի ընդլայնման, բառապաշարի հարստացման, գրական հաշակի ձևավորման միջոցն ընթերցելն է, գիրքն է: Ընթերցանության ժամանակ դաստիարակվում է նաև սովորողի բարոյականությունը, որի ձևավորման և դաստիարակության տեսակետից անփոխարինելի է գրական կերպարի ներգործությունը/ հերիաթ/

<<Ընթերցանությունը զարգացնում է մարդուն>> այս գիտակցությամբ սովորողները ձգտում են կարդալ, զարգանալ և կրթվել: Գիրքը նպատակ է հետապնդում կատարելագործելու կարդալու և պատմելու տեխնիկան, դրա հետ մեկտեղ ձևավորել սովորողների գեղագիտական հաշակը, նրանց աշխարհընմբռնումը, ներկայացնել շրջապատի, կենդանական ու բուսական աշխարհի ճանաչման գործընթացը գեղարվեստական ու գործնական բնույթի զանազան նյութերի միջոցով:

Ընթերցելու շնորհիվ երեխայի խոսքն ավելի բազ է զարգանում , նա սովորում է նախադասությունները ճիշտ կազմել, ճիշտ արտահայտվել: Ընթերցանության ժամանակ դուրս են գրում թևավոր խոսքեր, գեղեցիկ մտքեր, դուր եկած արտահայտություններ, որոնք էլ օգտագործում են բանավոր և գրավոր խոսքում: Յուրաքանչյուր երեխա անհատականություն է, ուստի անհրաժեշտ է պայմաններ ստեղծել նրա անհատական տաղանդի և հմտությունների զարգացման համար:

Ընթերցանությունը երեխայի բառապաշարի անբակտելի մասն է կազմում:



	Ընթերցանության շնորհիվ չորրորդ դասարանցիները կարողացան ստեղծել իրենց հեքիաթները, յուրաքանչյուրը իր միտքը հանձնեց թղթին և ստացան փոքրիկ գրքույկ, որը տպագրվեց:

Եզրակացություններ, առաջարկություններ

Վերհանված արդյունքներ, եզրակացություններ, պատասխան հետազոտական հարցին	ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ <<Մեզ անբավարար է թվում երեխայի մարմինը և հոգին թողնել այնպիսի վիճակում, ինչպես դրանք տրված բնության կողմից , մենք հոգում ենք նրանց դաստիարակության և ուսման մասին, որպեսզի լավը դառնա ավելի լավը, իսկ վատը փոխվի և դառնա լավը>> ԼՈՒԿԻԱՆՈՍ Այսպիսով յուրաքանչյուր մանկավարժ ջանք ու եռանդ չխնայելով փորձում է հասնել առավելագույնին: Ուսուցիչը պետք է կարողանա իր աշակերտներին ակտիվացնել, հորդորել՝ ստանձնելու ուսումնառության պատասխանատվությունը: Պարզ է, որ նման մոտեցման դեպքում աշակերտները ձգտում են օգնել միմյանց, փորձ են ձեռք բերում: Հաղորդված տեղեկատվության ճշմարտացիությունը վիճարկելու ողանակով նրանք մարզում են իրենց միտքը:
Այլ տեղեկատվություն	Հետազոտության ժամանակ կիրառել եմ դիտարկում մեթոդը,որը հնարավորություն է տվել տեսնել հետազոտվող երևույթների և գործընթացների բոլոր կողմերը: Հոգեբանները առանձնացնում են կարդալու հմտություններին ձևավորման 3 փուլ՝ 1.վերլուծական 2.համադրական 3.ավտոմատացված: Կարևոր է նշել ,որ կարդալը ունի մի շարք հատկանիշներ,որոնք իրար հետ սերտորեն կապված ու

	փոխադարձաբար պայմանավորված են :Հենց այդ հատկություններով էլ բնութագրվում է լավ կարդալը: Հարկ եմ համարում ստորև նշել լավ կարդալու որակները: .Ճիշտ կամ անսխալ կարդալ .Հասկանալով կամ գիտակցորեն կարդալ .Վարժ կամ սահուն կարդալ .արտահայտիչ կամ գեղարվեստորեն կարդալ .Արագ կարդալ:

Օգտագործված գրականության

1. 3.ԿԱՐԻՆԵ ԹՈՐՈՍՅԱՆ ՛ԿԱՐԻՆԵ ԶԻԲՈՒԽՉՅԱՆ << Ինչպես պլանավորել մայրենիի դասը>> (ուսուցչի ձեռնարկ)
2. 1.Ա.Ե. Տեր- Գրիգորյան ,Հայոց լեզվի մեթոդիկա,Երևան 1980թ
3. Գյուլամիրյան Ջ.,, Տարրական դասարաններում արտադասարանային ընթերցանության կազմակերպման խնդիրները և մեթոդները, «Նախաշավիղ», 2001
4. Գյուլամիրյան Ջ., Արտահայտիչ կարդալու կարողության ձևավորման հնարները,
5. «Նախաշավիղ» 6.2010
6. ՆորԱրար կրթական ՀԿ, NorArar Eduqation NGO